ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(1 հոկտեմբերի 2006 թ.)

Հայոց Եկեղեցվո Մաշտոց ծիսամատյանի Ձեռնադրության կանոնի հետևողությամբ այսօր մենք աղերսեցինք, որ Աստուծո Սուրբ Հոգին իջնե այս ընծայված նորաոծ, նորապսակ քահանա Հայրերի վրա և Իր առատաբաշխ շնորհներով օժտե նրանց՝ տալով խոսելու և գործելու համարձակություն և մեծ շնորհ:

Հայոց Հայրապետի՝ Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի հրամանավ և օրհնությամբ, այսօր օծումը կատարեցինք ինը քահանա Հայրերու, որոնք քահանայության իրենց պաշտոնը քիչ ժամանակ հետո պիտի ստանձնեն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից: Եվ ձեռնադրության պահին մեր աղոթքը այն էր, որ մարդկային, աշխարհիկ բոլոր հոգսերը, մտահոգությունները և աշխարհիկ բոլոր ձգտումները նրանց միջից Աստված վերացնե և նրանց տա աստվածային և երկնավոր շնորհքը՝ «հանապազ լնուլ» կարիքները հոգևոր մեր կյանքի:

Սիրելի քահանա եղբայրներ,

Ահավասիկ օծումը կատարեցինք ձեր քահանայության: Ամեն մեկիդ նոր անուն տվեցինք, ամեն մեկդ դարձաք նոր մարդիկ աշխարհի վրա և իբրև նոր մարդ Սուրբ Հոգով սնված, Սուրբ Հոգով ներշնչված և աստվածային շնորհներով օժտված, դուք վաղը պաշտոնի պիտի անցնեք մեր ժողովրդի կյանքի մեջ: Թող Աստված բոլոր ձեր առջև ծառացած դժվարությունները վերացնե, թող Սուրբ Հոգին Իր շնորհներով զորացնե ձեզ ձեր առօրյա հովվական աշխատանքին մեջ և ձեզ զորավիգ կանգնի: Ուր որ ծառայեք, պիտի հիշեք, որ Աստուծո ողորմածությունը, աստվածային շնորհը ձեզ վրա է, և նաև չմոռանաք երբեք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որի օրհնության շնորհիվ է, որ դուք այսօր քահանայական պատիվը զգեցաք: «Երիցունք քո զգեցին զարդարութիւն եւ սուրբք Քո ցնծալով ցնծասցեն»,- ասում է սաղմոսերգուն (Սղմ. ՃԼԱ 9):

Քրիստոնեական խորհրդաբանությամբ հրեշտակների երկնային քահանայության ինը դասերին երկրի վրա համապատասխանում են եկեղեցական նվիրապետության ինը դասերը, որոնց մի կարևոր աստիճանն է կազմում քահանայից դասը, որով քահանաները զուգահեռի մեջ են հրեշտակաց համապատասխան մի դասի հետ, և դուք, սիրելի քահանաներ, ձեր կյանքով այդ հրեշտակային վերաբերմունքը ցույց պիտի տաք համբերությամբ, խոնարհությամբ, ծառայասիրությամբ և հատկապես Մայր Աթոռին նվիրվածությամբ: Թող աստվածային շնորհը անպակաս լինի Ձեր վրայից:

Սիրելի հավատացյալներ, ձեր ներկայությամբ և ձեր աղոթքներով մենք այս քահանա Հայրերի օծումը կատարեցինք: Աստված այս օծման ընթացքին Սուրբ Հոգու շնորհները թող բերե և պարգևե նաև ամեն մեկուդ, և մենք այս եկեղեցուց զորացած բաժանվենք: Մի անգամ ևս մեր խորին հարգանքը և շնորհակալությունը Վեհափառ Հայրապետին՝ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ ինձ պատիվը շնորհեց այսօրվա ձեռնադրությունը կատարելու ինը քահանա Հայրերու:

Այսօր Վարագա Սուրբ Խաչի տոնն է: Երկու շաբաթ առաջ այս եկեղեցում Սուրբ Խաչի Վերացման տոնը կատարեցինք, և այդ առթիվ ես խոսք առի և ըսի, որ Սուրբ Խաչը աստվածայինի և երկնայինի հանդիպման կենտրոնն է: Երկնքից Աստված խոնարհեցավ երկիր Իր Որդու միջոցով և մարդկային ցեղը, որ ի սկզբանե կփնտրեր աստվածային գոյության գաղտնիքը, հորիզոնական գիծ կազմեց և երկնքեն իջնող աստվածային օրհնության հետ խաչի ձևը առավ և այդ խաչի ձևի վրա, խաչափայտի վրա, Գողգոթայի բարձունքին մեր Տեր Հիսուս Քրիստոս Իր անմեղ արյունը թափեց: Դրանով հորիզոնական, որ է բոլոր մարդկային ձգտումների, Աստված ճանաչելու որոնումների պատասխանը տվեց Գողգոթայի բարձունքին:

Այսօր մեր Եկեղեցին տոնակատարությունը կընե Վարագա լեռան վրա Սուրբ Խաչի վերացման 628 թվականին, երբ Հերակլ կայսրը եկավ և պարսիկներից վերագրավեց Քրիստոսի Սուրբ Խաչը: Այն ժամանակ Մժեժ Գնունի Հայոց իշխանը մասնակցեցավ իր զորքով այդ ազատագրության աշխատանքին, և ճանապարհի վրա բարձրացուցին Վարագ լեռան վրա խաչափայտի մասունքը, և բոլոր մարդիկ խոնարհվեցին այդ խաչափայտի առջև: Այսօր մենք այդ խաչափայտի ծանրությունը նաև ձեր ուսերի վրա դնում ենք: «Ամեն ոք, որ Ինձ կուզե հետևիլ,- կըսե Հիսուս, - թող իր խաչը առնե և Իմ ետևից գա» (Մատթ. ԺԶ 24):

Խաչին նվիրված այսօրվա եկեղեցական խորհուրդը ձեր ուսերի վրա, մեր բոլորի ուսերի վրա դրված խաչի խորհուրդն է, որ մեզ զորավիգ պիտի կանգնի, պաշտպան լինի մեր ողջ կյանքի ընթացքին այժմ և հավիտյանս հավիտենից. Ամեն: